Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
31.12.2010թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ 6563
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	1974	30.1
դիմում	521	7.9
բողոք	3843	58.5
կրկնակի	220	3.3
կոլեկտիվ	5	0.07

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 1759

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	1544	23.5
բողոք	215	3.2

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	202	3.2
կոմունալ-կենցաղային	56	0.8
շինարարական	143	2.1
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	28	0.4
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	86	1.3
առողջապահության	24	0.3
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1317	20.1
օրենսդրական	60	0.9
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	195	2.9
ապարատային		

այլ հարցեր	4442	67.6
սեփականաշնորհում	10	0.1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2010Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 6563 նամակներից մոտ 30.1%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 58.5%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 23.5%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 20.1%-ն անընչվում է ֆինանսական հարցերին, մոտ 2.9%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում« ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 3.2%-ը առնչվում է բնակարանային, 0.8%-ը կոմունալ-կենցաղային, 2.1%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 67.6%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առընչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 6260-ին տրվել է գրավոր, իսկ 250-ին բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 53-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն